Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7658 գ
1802-2
Գրան
Ч6
355.58
21769
А 4094

ԱՍՓԽԶ ՑԵՎ ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

№ 12

ՀՐԱՀԱՆԳ

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ 4-ՐԴ ՎԻՃԱԿԱԽԱՂՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

„ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ"-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԹՎԵՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1319
ԳՐԱՌԵ ՊԳԼԽՎԱՐ 3089 (Բ)
ՏԻՐԱԺ 3000

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս տարի ՊԱՋԸ–Ավիաքիմի 4–րդ վիճակախաղի տոմսերի իրացումը սովորականից անհամեմատ ուշ և սկսվում։ Այս հանգամանքը սնկասկած բացատրելի կանդրադառնա մեր կազմակերպությունների բյուջեյի յեկամտային մասի վրա, վորովհետև մեզ անհրաժեշտ նյութական միջոցների մի մասը ուշ և սկսվում ստացվել։ Սրա հետևանքով մի շարք ձեռնարկումներ իրացնելը կդժվարանա։

Մյուս կողմից այս տարի Հայաստանում իրացվելիք տոմսերի թիվը հասնում է 100,000–ի, վորը հինգ անգամ ավելի յե, քան անցյալ տարի։

Ահա թե ինչու մեր կազմակերպությունները պետք է ամենակտրուկ միջոցներ ձեռք առնեն թե՛ 4–րդ վիճակախաղի տոմսերն իրացնելու և թե՛ փողը հավաքելու և ժամանակին կենտրոն փոխադրելու առպարիզում։

Սա ամենահիմնական խնդիրն է. այս չպետք է մոռանալ։

Անհրաժեշտ է, վորպեսզի 4–րդ վիճակախաղից դուրս եկած բոլոր գումարները հավաքվեն 1930 թվի առաջին կիսում (այսինքն մինչև հուլիս), իսկ նրանց մեծ մասը՝ առաջին յերեք ամսում (այսինքն մինչև ապրիլ)։

Այս աշխատանքը միանգամայն իրագործելի յե, յեթե տեղական կազմակերպությունների նախագահու-

A-4094

թյուններին իրենց անմիջական դեկավարության տակ վերցնեն տոմսերի իրացման գործը և անցկացնեն իբրև հարկածային ֆինանսական կամպանիա։

Այս հրահանգը մանրամասնորեն ցույց է տալիս, թե ի՞նչ պետք է անել այդ ասպարիզում։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

15 հունվարի 1930 թ., Երևան։

1. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԴԵՐԸ ՍՏՈՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԶԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Համամիութենական ՊԱՋԸ-Ավիաքիմի գծով ամեն տարի կազմակերպած վիճակախաղերը հսկայական արձագանք են գտնում վողջ աշխատավորության մեջ ու խոշոր գումարներ են տալիս յերկրի պաշտպանության համար։

Վերջին յերեք տարիների ընթացքում անց և կացված յերեք վիճակախաղ, վորոնց ժամանակ իրացված և 9 միլ. տոմս 4½ միլ. ռուբլու։

Առաջին վիճակախաղը տվել է կազմակերպությանը զուտ ոգուտ 794·891 ռուբլի, վորից 690·795 ռուբլի ծախսված է ավիաքիմիական շինարարության վրա, իսկ մնացած 104·095 ռուբլին հատկացված է ստորին կազմակերպություններին մասսայական, խմբակային աշխատանքներն աշխուժացնելու և աշխատավորությունը յերկրի պաշտպանության համար նախապատրաստելու։

Յերկրորդ վիճակախաղը տվել է 1·071·798 ռուբլի ոգուտ, վորից նույն նպատակների համար հատկացված է Համամիութենական ՊԱՋԸ-Ավիաքիմին 813·696 ռուբլի, իսկ 258·101 ռուբլին ստորին կազմակերպություններին։

Չորրորդ վիճակախաղի զուտ արդյունքը կազմել է 1 ու կես միլ. ռուբլի, որից հատկացված է տեղերին 667·465 ռուբլի, իսկ 801·669 ռուբլին Համամիութենական ՊԱՋԸ–Ավիաքիմին։

Վիճակախաղերի յեկամուտները տարեց–տարի աճել ցել են ու կազմել են կազմակերպության յեկամուտի հիմնական աղբյուրը (Կ. Ի. նախահաշվի մոտավորապես 70 տոկոսը ծածկվում է այդ յեկամուտներով)։

Չորրորդ վիճակախաղը կազմակերպությանը տալու յե 3 միլ. ռուբլի զուտ ոգուտ, որից 1·520·000 ռուբլին հատկացվելու յե Համամիութենական ՊԱՋԸ–Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդին, մի շարք կարևոր աշխատանքներ կատարելու համար, ինչպիսին են պահեստի հրամկազմի պատրաստման ու վերապատրաստման խնդիրը, պարտադիր ռազմականացման ուսուցումը, գյուղատնտեսական բնագավառում կատարվելիք աշխատանքները, քաղաքացիական ավիացիայի զարգացման խնդիրը, ոդաչուների համար քաղաքացիական դպրոցներ կազմակերպելու և վերջապես իլման հրապարակներն ու պաշտպանության տները կարգավորելու և կահավորելու համար։ Մնացած 1·480·000 ռուբլին հատկացվելու յե ստորին կազմակերպություններին խորացնելու մասսայական աշխատանքները բոլոր ճյուղերում։

Հետևապես կազմակերպության առաջ դրված պատասխանատու խնդիրների կենսագործումը կախված և նրանից, թե ինչպիսի ակտիվություն կհայտնաբերեն տեղերը և Միության վարչ աշխատակազմությունը,

4–րդ վիճակախաղի տոմսերն ամբողջությամբ իրացնելու համար։

Դրանից յելնելով ԽՍՀՄ վողջ աշխատավորությունն իր պարտքը պետք է համարի մասնակցելու 4–րդ վիճակախաղի տոմսերի տարածման գործին ու պետք է տա պահանջված միջոցներն ամրապնդելու յերկրագործում առաջին պրոլետարական իշխանությունը։

2. 4–ՐԴ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զորրորդ վիճակախաղը համեմատած նախկին յերեք վիճակախաղերի հետ ունի մի շարք առավելություններ։ Նախ 4–րդ վիճակախաղի տոմսերի յուրաքանչյուր 199,5 տոմսից շահում է մեկը, մինչդեռ յերրորդ վիճակախաղի 250–ից մեկն ել շահում, իսկ յերկրորդի՝ 270–ից։

Յերկրորդ, վոր շահումների թիվն անհամեմատ ավելացել է։ Այսպես որինակ, յերրորդ վիճակախաղի շահումների թիվը կազմում ել 16·000, մինչդեռ 4–րդ վիճակախաղինը հավասար է 40·050–ի—600·000 ռ.գումարով։ Յեվ վերջապես ամենահիմնական առավելությունը նրանումն է, վոր 4–րդ վիճակախաղն ունենալու յե վեց իսպարկություն (տիրաժ), յուրաքանչյուր ինքնուրույն հանրապետության մեջ առանձին, մեկը մյուսից մեկ–յերկու ամիս հետո։

4–րդ վիճակախաղն ունենալու յե հետևյալ կառուցվածքը։ Բաց է թողնվելու 8 միլ. տոմս, հատը 50 կոպ. 4 միլ. ռուբլու։ 8 միլ. տոմսը բաժանվելու յե 80·000 սերիայի, յուրաքանչյուրում հարյուրական տոմս։ Այդ սերիաները իրենց հերթին բաժանվելու յեն վեց կարգի։ Տարբեր դույներով ու նշաններով։ 1–ին

կարդ ՌՍՖԽ Հանրապետությունն ունենալու յի 4 ու կես միլ. տոմս. 2-րդ կարգն Ուկրայնայի ՍԽ Հանրապետությունը 1½ միլ. տոմս, 3-րդ կարգը Անդրկովկասյան Ֆ. Խ. Հանրապետությունն 800·000 տոմս, 4-րդ կարգը Բելոռուսիայի Խ. Հանրապետությունը 600·000 տոմս, 5-րդ կարգն Ուզբեկստանի Խ. Հանրապետությունը 500·000 հատ և 6-րդ կարգ Թաթարստանի Խ. Հանրապետությունը 100·000 հատ:

Մանրություն.— Անդրկովկասյան Խ.Ս.Ֆ. Հանրապետությանը հատկացված 800·000 տոմսից պակասեցված և 150·000 հատ:

Վորպեսզի մասնակցերի մեջ հետաքրքրություն առաջ բերվի՝ տոմսերը տարածվելու յին հետևյալ ձևով: Յուրաքանչյուր հանրապետություն պարտավորվում է տարածել մյուս հանրապետությունների տոմսերից վորոշ քանակ: Այսպես որինակ. Անդրկովկասյան ՊԱՋԸ-Ավիաքիմի 650·000 տոմսից մյուս հանրապետությունները տարածելու յին 490·000 հատ. իսկ տեղերում պիտի տարածվի 160·000 տոմս: Անդրկովկասյան ՊԱՋԸ-Ավիաքիմն իր հերթին տարածելու յի մնացած հինգ հանրապետությունների տոմսերից 490·000 հատ: Այդ քանակից Հայաստանում տարածվելու յի Թուրքմենստանի տոմսերից՝ 800 հատ, Ուզբեկստանի՝ 3500 հատ, Բելոռուսիայի 4000 հատ, Ուկրայնայի 10·500 հատ, ՌՍՖԽՀ 52·800 և Անդր. ՖՍԽՀ 28·400 հատ—ընդամենը 100·000 հատ:

Այսպիսով յեթե մեկը ձեռք է բերում յուրաքանչյուր Հանրապետության տոմսերից մեկ հատ, ապա նա հնարավորություն է ունենում վեց անգամ մասնակցելու խաղարկություններին: Նմանապարբերական

տիրաժները հակայական հետաքրքրություն կառաջացնեն աշխատավորության մեջ։

3. ՎՈՐՔԱՆ ՏՈՄՍ ՊԵՏՔ Ե ԻՐԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անդրկովկասյան ՊԱՋԸ–Ավիաքիմին հատկացված 650·000 տոմսերից Ադրբեջանի ՊԱՋԸ–Ավիաքիմն իր վրա չի վերցրել տարածելու 300·000 հատ, Վրաստանինը 250·000 հատ, իսկ մնացած 100·000 հատը Հայաստանի ՊԱՋԸ–Ավիաքիմը։

Կասկածից դուրս է, որ նման քանակի իրացումը պահանջում է հսկայական աշխատանք։ Համեմատած 3-րդ վիճակախաղի տոմսերի իրացման հետ 4-րդ վիճակախաղինը համարյա թե հինգ անգամ ավելանում է։ Երրորդ վիճակախաղի տոմսերից Հայաստանում տարածվեց ընդամենը 22·200 հատ, իսկ այժմ տարածվելու չի 100·000 հատ։ Այդ քանակի տոմսերի իրացումը Հայաստանում այնքան էլ դժվար չէ. չէթե ՊԱՋԸ–Ավիաքիմի յուրաքանչյուր անդամ ձեռք բերի մեկ տոմս, ապա կատարվի այդ թիվը։ Մնում է, որ այդ կամպանիայի ընթացքի վրա լուրջ ուշադրություն դարձվի ու աշխատանքի թափը չթուլացվի։

Անցյալ տարվա նոյեմբեր ամսում Երևանում կայացած ՊԱՋԸ–Ավիաքիմի գավառական և շրջանային պատասխանատու քարտուղարների խորհրդակցությունը վորոշեց Հայաստանին հատկացված 100·000 տոմսը բաշխել հետևյալ ձևով՝

1. Լենինական.	Գավիտոմ.	հատկացնել	25.000	տոմս
2. Լոռու	»	»	18.000	»
3. Սևանի	»	»	12.000	»
4. Զանգեզուրի	»	»	10.000	»
5. Երևանի	»	»	35.000	»

Ցերևանի գավառին հատկացված 35.000 տոմսից Ցերևան քաղաքում տարածվելու է 20.000 տոմս, իսկ մնացած 15.000-ը շրջաններում հետևյալ ձևով՝

1. Ղամարլվի շրջանի խորհուրդը տարած. է				3.000	հատ
2. Ղուրդուղուլու	»	»	»	3.000	»
3. Աշտարակի	»	»	»	2.000	»
4. Եջմիածնի	»	»	»	1.500	»
5. Թալինի	»	»	»	1.000	»
6. Մեղրի	»	»	»	1.000	»
7. Կոտայքի	»	»	»	1.000	»
8. Հրազդանի	»	»	»	1.000	»
9. Դարալագյազի	»	»	»	1.000	»
10. Վեդիի	»	»	»	500	»

Թե գավառային և թե շրջանային կազմակերպություններն այժմվանից պետք է իրենց հատկացված տոմսերը բաշխեն ըստ շրջանների և բջիջների ու վաղուցից ունենան իրենց ձեռքի տակ ստուգիչ թվեր, որոնք կապահովեն իրենց հատկացված տոմսերի իրացումը 100 տոկոսով։

Դրա հետ զուգընթացաբար պետք է կազմվի աշխատանքի պլան, ըստ որում տոմսերի իրացման համար պետք է տալ ստուգիչ թվեր։

Առուգին թվեր 4-րդ վիճակախաղի տոմսերի իրացման համար Հայաստանում

Կազմակերպությունների անունները	Հունվար տոկ.	Փետրվ. տոկ.	Մարտ տոկ.	Ապրիլ տոկ.	Մայիս տոկ.	Հունիս տոկ.	Ընդամենը տոկ.
1. Լենինական	500 2	2500—10	6250 -25	8750—35	5000—20	2000—8	25000 100
2. Լոռի	360 »	1800 »	4500 »	6300 »	3600 »	1440 »	18000 »
3. Սևան	240 »	1200 »	3000 »	4200 »	2400 »	960 »	12000 »
4. Զանգեզուր	200 »	1000 »	2500 »	3500 »	2000 »	800 »	10000 »
5. Ծերևան քաղ.	400 »	2000 »	5000 »	7000 »	4000 »	1600 »	20000 »
6. Ղամարլու	60 »	300 »	750 »	1050 »	600 »	240 »	3000 »
7. Ղուրդուղուլի	60 »	300 »	750 »	1050 »	600 »	240 »	3000 »
8. Աշտարակ	40 »	200 »	500 »	700 »	400 »	160 »	2000 »
9. Եջմիածին	30 »	150 »	375 »	525 »	300 »	120 »	1500 »
10. Թալին	20 »	100 »	250 »	350 »	200 »	80 »	1000 »
11. Մեղրի	20 »	100 »	250 »	350 »	200 »	80 »	1000 »
12. Կոտայք	20 »	100 »	250 »	350 »	200 »	80 »	1000 »
13. Հրազդան	20 »	100 »	250 »	350 »	200 »	80 »	1000 »
14. Դարալագյազ	20 »	100 »	250 »	350 »	200 »	80 »	1000 »
15. Վեդի	10 »	50 »	125 »	175 »	100 »	40 »	500 »
Ընդամենը	2000—2	10000—10	25000—25	35000—35	20000—20	8000—8	100·000—100

4. ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ 4-ՐԴ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՏՈՄՍԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վորպեսզի 100·000 տոմսերի իրացումը հաջող ընթանա, դրա համար անհրաժեշտ է անցկացնել հետևյալ կազմակերպչական աշխատանքները։

1. Պահանջել շրջխորհուրդներից ու բջջի բյուրոներից գրավոր կայուն պահանջ տարածվելիք տոմսերի քանակի նկատմամբ։ Անմիջապես ստուգել այդ պահանջը և անել համապատասխան դիտողություն։ Որինակ. յենթադրենք Լենինականի Տեքստիլ դործարանի բջջի բյուրոն գրավոր պահանջ է ներկայացրել 100 տոմսի, մինչդեռ Տեքստիլում ՊԱԶԸ-Ավիաքիմի անդամների թիվը հասնում է 300-ի։ Նման դեպքում անհրաժեշտ է բջջի բյուրոյից պահանջել նոր պահանջ, անպայման յենելով տեղական պայմաններից։

2. Մինչ տոմսերի տարածումն անհրաժեշտ է տալ գրավոր հրահանգ ստորին կազմակերպություններին այն մասին, թե ինչ և ինչպես պետք է անել, տոմսերի հաջող իրացման համար։ Հաջորդաբար ստուգումներով պարզել, թե ինչ չափով են կենսագործում տեղերը տրված հրահանգները։ Պետք է նշել կայուն ժամկետ տոմսերի վաճառքից գոյացած գումարների փոխադրման համար։

3. Գավ. ու շրջանային կազմակերպությունների, ինչպես նաև բջջի բյուրոների, անդամ մասնավոր անհատներին շահագրգռելու համար անհրաժեշտ է սկզբում հայտարարել մրցանակաբաշխություն լավ տարածողների մեջ։ Պետք է այդ աշխատանքը լուսաբանել մամուլում ու պատի թերթերում։

4. Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ու այժմյա-

նից բանակցություններ վարել մի շարք հիմնարկների հետ, ինչպիսին են Պետրանկի բաժանմունքները, խնայողական դրամարկղները, փոստ-հեռագրատները, վարչական ընկերությունները և այլն ու առմսերի իրացման համար նրանց կողմից պարտավորություն վերցնելու դեպքում հսկել, որպեսզի ժամանակին այդպիսին տարածվի:

5. Զբաղվականանալով դրամոր ու կենդանի ցեկավարությամբ, պետք է հրավիրել բջիջի և բյուրոների նիստ ու քննության առնել առմսերի հաջող իրացման խնդիրը:

6. Նախկին վիճակախաղերի փորձը ցույց է տվել, որ շատ դեպքերում վիճառմսերն ընկած են յեղել բջիջի բյուրոյի այս կամ այն անդամի մոտ և ուշադրություն չի դարձված յեղել տարածելու կամ հետ վերադարձնելու: Նման դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է հաճախակի ստուգումներ կատարել ու պահանջել պարբերաբար ներկայացնելու դրամոր զեկուցումներ կամպանիայի ընթացքի մասին վարից վեր:

7. Ամեն մի կազմակերպություն, որը պարտավորություն է վերցնում իր վրա տարածելու 4-րդ վիճակախաղի առմսերը, պետք է ունենա տեղեկագիր (ведомость), ուր գրանցվում են ստացված առմսերը և հանձնված գումարի ու առմսերի մնացորդը: Միայն այս ձևով հնարավոր է բջիջներում չրջ. ու գավառային խորհուրդներում չվաճառված առմսերը փոխադրել մի տեղից մի ուրիշ տեղ, ուր պահանջ կդգացվի:

8. Պարբերաբար ստուգումներով պետք է հայտաբերել, թե ինչպես են կենսագործվում ստուգիչ թվերը,

գլխավորապես ուշադրություն դարձնելով վաճառքից դուրս եկած դրամների ժամանակին փոխադրելու վրա։

Ցենթադրենք Աշտարակի շրջանային խորհրդին բաց և թողնված փետրվարի 1-ին 100 տոմս, որոնք արժեքի դիմաց 30 ռուբլի շրջխորհուրդը պարտավոր է մուծելու վոչ ուշ քան մարտի 1-ը։ Պետք է ուշի ուշով հետևվել, որ այդ գումարը ժամանակին մուծվի, այլապես նոր տոմսեր բաց թողնելով պարտքի գումարը կավելանա։

9. Նախորդ յերկք վիճակախաղերի փորձը ցույց է տվել, որ տոմսերի հաջող իրացումը կախված է ագիտացիոն աշխատանքներից։ Այդ տեսակետից անհրաժեշտ է ոգտագործել ագիտ նյութերը (պլակատներ, լոզունգներ, աֆիշներ, կոչեր և այլն), կինոները, թատրոնները և զբոսավայրերը։

10. Նկատի ունենալով տոմսերի շատությունն, անհրաժեշտ է հենց սկզբից որից կազմակերպել վաճառք, փողոցներում, թատրոններում ու կինոներում, այդ առթիվ վաղորոք թույլտվություն ստանալով վերադաս կազմակերպությունից։ Տոմսերի նման ձևի արդյունավետ տարածելը հնարավոր է մեծ քաղաքներում, յեթե միայն կազմակերպված ձևով հանդես գան։ Տիրաժը մոտենալու որերին, այդպիսի վաճառքի վրա առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ու աշխատել չվաճառված տոմսերն իրացնել։

5. ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ 4-ՐԴ ՎԻՃ. ՏՈՄՍԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Չորրորդ վիճակախաղի տոմսերի տարածման կամ-

պանիան ընկնում և հանրապետական, գավառային և շրջանային խորհրդների նախագահությունների վրա։

Համամիութենական ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով ամեն դի Կոմիտեի առաջ պատասխանատու են կազմակերպությունների նախագահությունները և այն անձինք, որոնց հանձնարարված է տանել այդ աշխատանքը։

Վերջապես այդ կամպանիայի վրա հատուկ ուշադրություն դարձվի՝ Հանրապետական, գավառական և շրջ. կազմակերպություններն ընտրում են պատասխանատու ընկերների, որպես վիճակախաղի լիազորներ, որոնք անմիջականորեն յենթարկվում են նրանց ընտրող նախագահությանը և նույն կազմակերպության պատասխանատու քարտուղարին։

Պակաս դեր չունեն կատարելու վերատուդիչ հանձնաժողովները, որոնք պարբերական ստուգումների շնորհիվ կաշխուժացնեն կամպանիայի թափը։ Նրանք պարտավոր են ամսական առնվազը մեկ անգամ ստուգելու տոմսերի վաճառքից դրոյացած գումարի կանխիկ լինելը, տոմսերի մնացորդը, հաշվառման ու հաշվետվության ճշգրիտ կենսագործումը։ Հսկելու ժամանակին գանձելու ու փոխադրելու իրացված տոմսերի գումարները, չթույլատրելով, որ առաջանա պարտքերի կուտակում և հսկելու կազմակերպչական ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների ճշտությանը և այլն։

Յուրաքանչյուր ստուգումից հետո կազմվում է արձանագրություն, որի մեջ անպայմանորեն պետք է նշել նկատված թերությունները ու հանվեն համապատասխան առաջարկություններ։ Ստուգումները պետք է թե պլանային և թե հանկարծակի բնույթ կրեն։

Կամպանիայի հաջող ընթացքը խոշորապես չափով կախված է Դ-րդ վիճակախաղի լիազորներից, որոնք աշխատելով ձեռք են հանեն այդ կամպանիայի հաջող ընթացքի վրա ու հարվածային կարգով կատարեն թե վերադաս մարմինների և թե նախագահության ու նրա պատասխանատու քարտուղարների կողմից առաջադրված խնդիրները:

Դ-րդ վիճակախաղի լիազորները տոկոսներ չեն ստանում, այլ ըստ իրենց կատարած աշխատանքների կարող են արժանանալ մրցանակաբաշխության: Լիազորները և յենթալիազորներն իրենց նախագահություններից վկայական են վերցնում, որ իրենք լիազորվում են ստանալու վիճառոմներ և առհասարակ Դ-րդ վիճակախաղին վերաբերյալ փաստաթղթեր:

Ծանոթություն.—Յենթալիազորներ համարվում են նրանք, ովքեր ընտրվում են աշխատանք տանելու գավառներում և շրջաններում:

6. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱԼ ՉՈՐՐՈՐԴ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՏՈՄՍԵՐԸ

Յերրորդ վիճակախաղի տոմսերի տարածման փոքը դուրս տվեց, որ տոմսերի թե բաշխման և թե մատակարարման ձևը սխալ հիմքերի վրա յե դրված յեղել: Վիճակախաղի Կոմիտեն, կամ Անդր. ՊԱՋԸ-Ավիաքիմը տոմսերն ուղարկելիս (Պետրանկի միջոցով) կարգադրում էին, որ այդպիսին ձևով բերվի կանխիկ վճարով, որովհետև վոչ թե միայն գավառական կամ շրջանային կազմակերպություններն աղատ միջոցներ չեն ունեցել տոմսերը կանխիկ դուրս դրելու, այլ և այդ հնարավորությունից զուրկ եր Հայաստանի Պա-

ջը–Ավիաքիմի կենտրոնական Խորհուրդը, ուստի սամ-
երի տարածման կամպանիան վորոշ չրջանում թույլ
ընթացավ։

Այժմ այդ խնդիրը հարթված է ու 4-րդ վիճակա-
խաղի տոմսերը բաց են թողնվելու ապառիկ։

Սակայն արանից չպետք է գալ այն յեզրակացու-
թյան, թե վաճառքից գոյացած գումարները կարելի յե
պահել գավառներում, չրջաններում ու բջիջի բյուրո-
ներում։

Համամիութենական ՊԱԶԸ–Ավիաքիմի վիճակախա-
հարված ային խնդիրներին լուծում տալը կախված է
գրամական միջոցներից, վորի հետևանքով պետք է ջա-
նալ գումարների փոխադրումը կատարել ժամանակին։

Սարքին կազմակերպություններին վիճ. տոմսերը
բաց և թողնելու բացառապես Հայաստանի ՊԱԶԸ–Ավիա
քիմի կենտրոնական խորհուրդը։ Ըստ վերջինիս գրավոր
հայտարարության, Պետբանկի բաժանմունքը փոխա-
դրում և հայտարարության մեջ հիշատակված քանակի
տոմսերը գավառային ու գավառակային իր բաժան-
մունքներին։

Շփոթություններ չառաջանալու համար Հայաստա-
նի ՊԱԶԸ–Ավիաքիմը Պետբանկի միջոցով բաց և թողնե-
լու տոմսեր բոլոր գավառներին և Երևանի չրջաններ-
ին, ուր կան Պետբանկի բաժանմունքներ, իսկ գա-
վառներն իրենց հերթին կարող են նման հայտարարու-
թյուններ ներկայացնել Պետբանկի բաժանմունքներին
իրենց չրջանների համար, համաձայն մատնատրման
(разверстка)։

Ավելորդ ծախսերից խուսափելու համար անհրա-
ժեշտ և գրամական փոխադրությունները կատարել

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐԱԼԱՐԽԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

Պետրանկի բաժանմունքների միջոցով, ըստ վորում, համաձայն Համամիութենական ՊԱՋԸ–Ավիաքիմի դեկտեմբերի Խորհրդի Նախագահության ու Պետրանկի Վարչության մեջ կազմած պայմանագրի, Պետրանկի բաժանմունքները բոլոր դրամական և տոմսերի փոխադրումները կատարում են իրենց հաշվին։

Ըստ ներկայացրած պահանջի Պետրանկի բաժանմունքները պարտավոր են տոմսեր փոխադրել բոլոր այն վայրերը, ուր ունեն բաժանմունքներ։ Պետրանկի բաժանմունքներից տոմսեր ստանալու իրավունք վերապահվում է այն անձանց, վորոնք այդ առթիվ լիազորագիր կներկայացնեն իրենց նախագահություններից։

Տոմսերի վաճառքից գոյացած դրամարները տեղական կազմակերպությունները ներկայացնում են Պետրանկի բաժանմունքին 4 որինակից բաղկացած վճարման հայտարարությունների հետ, վորից յերկուսը մնում է Պետրանկի բաժանմունքում, մեկը դրամը մուծող կազմակերպության մոտ, իսկ չորրորդն ուղարկվում է վերադաս կազմակերպությանը։

7. 4-ՐԴ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՑ ԳՈՑԱՑԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՏՈԿՈՍԱՑԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ

Տոմսերի վաճառքից գոյացած ընդհանուր դումարից թե յերրորդ և թե չորրորդ դասու կազմակերպություններին հատկացվում է 37 տոկոս։

Մանրություն.—Բոլոր այն կազմակերպությունները, վորոնք չեն մտնում մարզերի (область) յերկրների (край) և հանրապետու-

թյունների մեջ, որոնք հաշվվում են 3-րդ դասի։

Բացի վերոհիշյալ 37 տոկոսից, բոլոր հանրապետությունները ստանում են լրացուցիչ 4 տոկոս կազմակերպչական ծախսերի համար, որից յերկու տոկոս հատկացվում է ինքնուրույն հանրապետությանը նույն նպատակի համար։ Տվյալ դեպքում Անդրկովկասյան ՊՍԶԸ-Ավիաքիմը ստանալու յե բացի 37 տոկոսից նաև 4 տոկոս, որից յերկու տոկոս հատկացվելու յե Հայաստանի ՊՍԶԸ-Ավիաքիմին։

Տոկոսային այդ հատկացումների մեջ չի մտնում նաև կազմակերպչական ծախսերի հաշվով նախատեսված ու վիճակախաղի կոմիտեյի կողմից հաստատված գումարը, որը կազմում է մոտավորապես 2 տոկոս (Հայաստանի ՊՍԶԸ-Ավիաքիմի նկատմամբ)։

Այդպիսով չհաշված կազմ. ծախսերի հաշվով բաց թողնվելիք գումարից (մոտավորապես 4 տոկոս), տոկոսը հատկացվում է Անդր. ՊՍԶԸ-Ավիաքիմին, իսկ մնացած 32 տոկոսը բաշխվելու յե հետևյալ ձևով։ Բջիջները ստանում են 10 տոկոս, շրջանային կազմակերպությունները 10 տոկոս, գավառային կազմակերպությունները 7 տոկոս, իսկ մնացած 5 տոկոսը Հայաստանի ՊՍԶԸ-Ավիաքիմի կենտր. խորհուրդը։

Ծանոթություն.—Գավ. ու շրջ. կազմակերպություններին հասանելիք 10 տոկոսից յերկու տոկոսը հատկացվում է կազմակերպչական ծախսերին, որի համար վաղորոք կազմվում է նախահաշիվ ու քննության առնվում նախագահության նիստում։ Հաստատված նախահաշվի

պատճենը ուղարկվում է վերադաս կազմակերպությանը։ Մնացած 8 տոկոսը հատկացվում է կազմակերպության պրակտիկ աշխատանքներին։

Տոմսերի վաճառքից դոյացած գումարները պահվում են հետևյալ ձևով։ Վաճառքից դոյացած ամբողջ գումարի 10 տոկոսը պահելով բջիջը, մնացած գումարը փոխադրում է շրջանային խորհուրդ, վերջինս բջիջների ու իր միջոցով տարածված տոմսերի արժեքից պահում է 10 տոկոս ու մնացածը փոխադրում դավառային կազմակերպությանը, վորը նույնպես պահելով իրեն հասանելիքի 7 տոկոսը՝ մնացածը մուծում կամ տեղական Պետբանկի բաժանմունքը կամ փոխադրում է Հայ. ՊԱԶԸ–Ավիաքիմը։

Որինակի համար, Լեն. գավառի Համամլվի շրջանի Սպիտակ գյուղի բջիջը ստացել է 100 ռուբլու վիճ. տոմս և 100 տոկոսով իրացրել է։ Այդ 100 ռուբլուց պահում է իրեն հասանելիք 10 տոկոսը՝ 10 ռ., մնացած 90 ռուբլին փոխադրում է Համամլվի շրջխորհրդին, վերջինս նույնպես պահելով 100 ռուբլու 10 տոկոսը՝ 10 ռուբլին, մնացած 80 ռուբլին փոխադրում է Լեն. գավ. կազմակերպությանը, իսկ նա պահելով 7 տոկոսը՝ 7 ռուբլին, մնացած 73 ռուբլին փոխադրում է Հայաստանի ՊԱԶԸ–Ավիաքիմին։

Անհրաժեշտ է նշել, վոր հասանելիք տոկոսները վաղորոք (авансом) ստանալը չի թույլատրվում, այլ այդպիսին կատարվում է տոմսերը վաճառելուց հետո միայն։ Եթե բջիջը, շրջ. ու գավառային խորհուրդը փակում են իրենց հաշիվը վերադաս կազմակերպաս-

թյան հետ, ապա նոր պահում են իրենց հասանելիք տոկոսները։

Վիճակախաղի վաճառքից դուրս եկած գումարների ծախսումը կազմակերպության պլանային կամ կազմակերպչական ծախսերի համար խստիվ արգելվում է, վորպեսզի խնդրի վրա պետք է վերստուգիչ հանձնաժողովները լուրջ ուշադրություն դարձնեն։

8. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Վիճաոմների հաջող իրացումը կախված է լիազորների, բջիջների և ՊԱԶԸ-Ավիաքիմի ակտիվ անդամների ինքնագործունեությունից։

Շահագրգռում առաջ բերելու համար գավ. և շրջ. խորհուրդներում, ինչպես նաև բջիջի բյուրոների և այդ գծով ակտիվ աշխատող ընկերների մեջ, վաղորոք պետք է կազմակերպել մրցանակաբաշխություն։

Մրցանակաբաշխության կարող են արժանանալ վերևում հիշված այն կազմակերպություններն ու անհատները, վորոնք իրենց վրա վերցրած տոմսերի քանակը կիրացնեն 100 տոկոսով ու չեն թերանա ժամանակին հաշվետվություն ներկայացնելու, բաց թողնված տոմսերի գումարները 100 տոկոս կդանձեն և կբերեն։

Այս հիմնական այն խնդիրներն են, վորոնցով պետք է առաջնորդվեն նրանք, ովքեր ցանկանում են արժանանալ մրցանակի։

ՀՍԽՀ ՊԱԶԸ-Ավիաքիմի կողմից նշանակված է մրցանակ՝

1-ին որիորակելի գավկաղմակերպ.	200 ռուբ.
2-րդ շրջանային »	100 »
3-րդ յերեք բջիջներին »	50—ական՝ 150 ռ.
4-րդ և յերեք մրցանակ ակտիվ տարածողներին	50—ական՝ 150 ռ.
Ընդամենը	600 ռ.

Գավ. և շրջանային խորհուրդներն իրենց հերթին պետք և նշանակեն նման մրցանակաբաշխություններ։

9. ԿԱՆՈՆՆԵՐ ՏՈՄՍԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Տոմսերի վաճառքի ընթացքում ամենահիմնական ուշադրությունը պետք և դարձնել հարվածային ձևով տարածելու այն տոմսերը, վորոնց վիճակահանությունն առաջին հերթին և կատարվելու։ Այսպես որինակ՝ յենթադրենք ՌՍՖԽՀ տոմսերի վիճակահանությունը տեղի յե ունենալու մայիսին, Ուկրայնայինը—հունիսին, Անդրկովկասինը հուլիսին և այլն։ Պետք և աշխատել ՌՍՖԽՀ վիճ. տոմսերից տարածել առաջին հերթին ու այդպես հաջորդաբար։

Սակայն սրանից չպետք և դալ այն յեզրակացության, թե մնացած կարդերի տոմսերի վաճառքի վրա ուշադրություն չպետք և դարձնել, ընդհակառակը, պետք և ամեն ջանք դործ դնել, վորպեսզի տոմսերը նշված ժամկետներին իրացվեն ու այդպիսով հնարավորություն ստեղծվի կարդերի հաջորդաբար վիճակահանություններին։

Վիճակահանությունները կատարվելու յեն հետևյալ ձևով՝ 6-րդ կարդի տոմսերի վիճակահանու-

թյունը տեղի յն ունենալու առաջին հերթին, 5-րդինը՝ յերկրորդ, 4-րդինը՝ յերրորդ, 3-րդինը՝ չորրորդ, 2-րդինը՝ հինգերորդ և առաջինը՝ վեցերորդ։ Վիճակախաղերի ժամկետները սահմանում է վիճ. կոմիտեն, վորի մասին վաղորոք կհայտարարվի մամուլի միջոցով։ Մինչ վիճակախաղը դյուղական բջիջներն իրենց մոտ չվաճառված տոմսերը վերադարձնում են շրջանային խորհրդին այն հաշվով, վորպեսզի վերջինս իր մոտ ունեցածի հետ վերադարձնի գավխորհուրդ վոչ ուշ քան 3 որ-վիճակախաղից առաջ։

Գավխորհուրդները իրենց մոտ գտնված տոմսերը վիճակահանությունից մեկ որ առաջ հանձնում են Պետբանկի տեղական բաժանմունքներին։

Հանձնման արձանագրությունը պետք է կազմել չորս որինակից, վորում պետք է նշել տոմսերի և սերիաների համարները և կարգերը։ Այդ արձանագրություններից մեկը հանձնվում է տոմսերը հետ տվող կազմակերպությանը, մեկը մնում է Պետբանկի տեղական բաժանմունքում, յերրորդն ուղարկվում է Պետբանկի գրասենյակ, իսկ 4-րդը վիճ. կոմիտեին։

Արձանագրությունները ստորագրում են Պետբանկի բաժանմունքի և ՊԱԶԸ-Ավիաքիմի Գավ. Խորհրդի ներկայացուցիչները և վերջինիս վերստուգիչ հանձնաժողովի անդամներից մեկը։

Ծանոթություն.— Գավկոմսոկերպությունը հանձնված արձանագրության պատճենը հանում է ու հաստատելուց հետո մի որինակն ուղարկում է ՀՍԽՀ ՊԱԶԸ-Ավիաքիմի Կենտրոնական Խորհուրդ։

Եթե նշած ժամկետում բլիթի բյուրոն, կամ շրջ. ու դավ. խորհուրդները տոմսերը չեն հանձնում Պետրանկի բաժանմունքներին, այն ժամանակ կազմվում և նույն ձևի արձանագրություն, որի պատճենն ուղարկվում է վերադաս կազմակերպությանը։ Հանձնված տոմսերի արժեքը վճարում են բլիթի բյուրոն շրջ. ու դավ. խորհրդները և այն անձինք, որոնք անփույթ են յեղել։

Վիճակահանությունից հետո ստացված աղյուսակները (таблицы) պետք է բաժանել ու հասցնել տմենահետին բլիթը։

Մինչև հինգ ռուբլի շահող տոմսերը կարող են դրամ ստանալ խնայողական դրամարկղներից։ Մինչև 100 ռուբլի շահողները՝ Պետրանկի բաժանմունքներից, իսկ 100 ռ. ավելի շահողները՝ Վիճակախաղի կոմիտեից։

Շահած գումարն ստանալու համար անհրաժեշտ է Պետրանկի բաժանմունք ներկայացնել շահող տոմսը։

100 ռուբլուց ավելի շահողներն իրենց տոմսը պատվիրած ու արժեքավոր ծրարով ուղարկում են Մոսկվա Վիճակախաղի Կոմիտեին հասցեով (Москва, Никольская 25/27—Лоткомитет) ու հայտնում են, թե ինչ են ուզում ստանալ՝ դրա՞մը, թե՞ իրը և նշել իրենց մանրամասն հասցեն։

Ցուրաքանչյուր կարգի վիճակահանությունից

հետո սաստիկ կապմակերպությունները ներկայացնում են հաշվետվություն այն հաշվով, վոր այդպիսին ստացվի Հայ. ՊԱՋԸ–Ավիաքիմում վոչ ուշ քան վիճակահանության մեկ ամիս հետո:

Ծանոթություն.—Շտհած իրերը հանձնվում են Մոսկվայում վիճակահանության հետո 3 ամսվա ընթացքում:

ՀԱՅ ՊԱՋԸ–ԱՎԻԱՔԻՄԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏՈՒՏԱԿ

Համամիութենական ՊԱԶԸ—ԱՎԻԱՖԻՄԻ 4-րդ վիճակախաղի շահումների ըստ կարգերի, յուրաքանչյուր հանրապետության առանձին։ Ամբողջ շահումների թիվը կազմում է 40050—601660 ռուբլի

№ № ըստ կարգերի	ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Մի շահումի արժեքը ռուբլիներով	Շահո մների քանակը ըստ հանրապետ. 1-ին կարգ ՌՍՖՍՀ	2-րդ կարգ ՈՒԿՐ ՍՍՀ	3-րդ կարգ ԲԵԼՈՌ ՍՍՀ	4-րդ կարգ ՀՍՍՀ	5-րդ կարգ ՈՒԶԲ. ՍՍՀ	6-րդ կարգ ՔԻՐԳԻզ. ՍՍՀ	Ընդամենը շահումները հանձներ	Գումար
1	Ճանապարհորդություն աշխարհի շուրջ յերկու ամսով	5.000	1	1	1	1	1	—	5	25.000
2	Թեթև ավտոմոբիլ 35 ձիաուժանոց կամ ավտո	3.000	1	1	—	—	—	—	2	6.000
3	Պյանինո կայանի ապրքավորում	2.000	1	—	—	—	—	—	1	2 500
4	Ճանապարհորդություն վոր յերկիրը քանկանաս 1½ ամսով	2.000	2	2	2	1	1	1	9	13.000
5	Արտադրող հովատակ, մոտոցիկլետ, կամ մոտոբային նավակ	1.000	1	1	1	—	—	—	3	3 000
6	Վարժական ալմաներ կամ անբուռանոնակ	700	1	1	1	—	—	—	3	2 100
7	Ճանապարհորդություն ԽՍՀՄ-ի սահմանների ներսում 2 ամսով	600	3	2	3	3	2	2	14	8.400
8	Թոշակ 1 տարով ՊՈՒՀ-երում	600	5	3	4	3	2	2	19	11.400
9	Ուսուցում քաղ. ուղղությամբ գրաքցում, յեթե շահողը կրավարարի պահանջվելիք պայմանները	600	3	—	—	—	—	—	3	1.800
10	Աշխատող ձի կամ ատոմձագրքանի ապրքավորում	500	2	3	—	1	1	—	7	3.500

11	Գալոշ մեքենա (և շինիոկով)	500	2	3	2	1	—	—	8	4.000
12	Աղնվացնող կենդանիներ յեզ, կով, ձի (ըստ ցանկության)	400	2	2	1	1	—	—	6	2.400
13	Նյութեր և գծագրեր պլաններ կառուցելու համար	400	3	2	1	1	1	—	8	3.200
14	Ուսուցում պլաններով թռչելու, յերթևեկությունը կարգավարելի պահանջվելիք պայմաններին	350	5	2	2	2	2	1	14	4.900
15	Շարքացան ուժ շարքի կամ հնձ. մեք.	240	4	2	3	2	—	—	11	2 640
16	Տեղեր սանատորիաներում 1 ամսով	200	40	10	—	5	3	2	60	12.000
17	Եքսկուրսիա Ս.Ս.Հ.Մ սահմաններում 2 շաբաթով	200	39	5	10	5	5	2	66	13.200
18	Հեծանիվներ	200	50	30	12	—	—	—	92	18.400
19	Խոտհունձ մեքենա	170	5	3	—	—	—	—	8	1.360
20	Վորսորդական հրացան 2 փողանի	150	10	5	5	—	—	—	20	3.000
21	Կալող մեքենա «Պոմոնա ռիատոմիչ» սրսկիչ, քամիչ և այլ գյուղատնտեսական գործիքներ	140	30	2	2	2	2	—	38	4.940
22	Պ. Ա. անկյան լրիվ սարքավորում	125	8	—	—	—	—	—	8	1 000
23	Հարման վիննոական կամ լուսալական	100	22	10	2	8	—	—	42	4.200
24	Կարի մեքենա ձեռքի	100	60	10	4	10	5	—	89	8.900
25	Ջմեռային սպորտ-հագուստ	80	50	—	—	—	—	—	50	4.000
26	Ֆոտո—ապարատներ	60	100	10	10	4	5	—	128	7.740

ՑՈՒՑԱԿ

Համամիութենական ՊԱՀ—ԱՎԻԱՔԻՄԻ 4-րդ վիճակախաղի շահումների քան կարգերի, յուրաքանչյուր հանրապետության առանձին, Ամբողջ շահումների թիվը կազմում է 40050—ից 1669 առարկա

Հերթական համար	ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Մի շահումի արժեքը առաջին տեղի համար	Շահումների քանակը քան հանրապետ. 1-ին կարգ Ռ.ՍՍՀ-ում	2-րդ կարգ Ուկ. ՍՍՀ	3-րդ կարգ Անդր. ՍՍՀ	4-րդ կարգ ԲՍՍՀ	5-րդ կարգ Ռուս. ՍՍՀ	6-րդ կարգ Թուրքմ. ՍՍՀ	Ընդամենը շահումներ	Գումարը
27	Տեղ հանգստյան անցնելու 3 շաբաթով	50	300	60	51	50	50	20	531	26 550
28	Ֆ ա մ հ ա ր	50	—	—	5	—	-		5	250
29	Հրացան վորսորդական մի փողանի	45	—	100	30	15	15	—	160	7.200
30	Գուլիան յերկիթափանի կամ սրսկիչ դյուզաս. մնասասունների դեմ	30	200	6	8	23	5	5	247	7.410
31	Գրպանի ժամացույց	30	100	50	50	50	30	—	280	8.400
32	Մանր արամատչափի հրացաններ	30	1000	500	100	100	100	50	1850	55.500
33	Մոդելային խաղալիքների սարքավորում	30	100	5	10	4	5	—	124	3.720
34	Գ ի տ ա ր	25	200	50	20	20	—	—	290	7.250
35	Գրվածների ժողովածու Լենինի	25	100	100	70	35	20	15	340	8.500
36	» » Մ. Գորկու	25	100	100	25	30	20	10	285	7.125
37	» » Լ. Տալստոյի	25	100	100	15	20	20	—	255	6.375
38	Գրպանի 25 դրքեր	25	900	200	50	—	—	—	1150	28.750
39	Մանդոլին	20	200	60	30	20	20	—	330	6.600

40	Ռադիո—ընդունիչ	20	500	100	50	30	30	—	710	14.200
41	Սպորտ կոստյում	20	1.000	200	200	100	100	—	1.600	32.000
42	Ա ծ և լ ի	20	100	25	20	15	15	—	175	3.500
43	Ինքնահոս գրիչ	20	300	30	30	—	—	—	360	7.200
44	Արծաթյա ծխատուփ	15	200	100	30	20	20	—	370	5 550
45	Գաստրոնոմյան	15	100	104	30	30	20	10	294	4.410
46	Գուլիան 1 խոշոր	10	400	100	10	4	—	—	514	5.140
47	Տաստրոլի զնդակ	10	400	100	100	200	200	—	1.000	10.000
48	Հ ա կ ա գ ա զ	10	2.000	300	100	150	100	50	2.700	27.000
49	Զմուշկ (անգլիական)	10	2.000	—	—	—	—	—	2.000	20.000
50	Սպորտ—դահուկներ	10	1.000	—	—	—	—	—	1 000	10.000
51	Երկանանձև թռիչք մարդատար սա-մոլատներով	8	3 000	500	300	430	400	—	4.630	37.040
52	Հուշատետր	5	1.800	1.500	500	100	100	—	4.000	20.000
53	Շախմատ տախտակով	5	2.500	1 000	300	200	100	80	4.180	20.900
54	Տարվա բաժանորդագրություն «ОСО Авиахим» թերթին	4р.50կ	2.200	500	400	400	300	80	3.880	17.460
55	Տարեկան բաժանորդագրություն «Авиация и химия» թերթին	2р.80կ	1.300	500	400	305	300	70	2.875	8.050
56	Փամփուշտներ 250 հատ	2р.50կ	—	1.000	1.000	600	500	100	3.200	8.000
		—	22.350	7.500	4.000	3.000	2.500	500	40.050	391050

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Համամիութենական 4-րդ վիճակախաղի ընթացքի մասին ..... գավառի ..... շրջանի ..... բջիջի ..... 1930 թ. ժամանակվա ընթացքում

Գործառնություն	1	2	3	4	5	6	Ընդամենը	Գումարը	
								Ռ.	Կ.
Մնացորդ առ.....									
Ստացված և									
Ընդամենը									
Վաճառված և հետ և ուղարկ									
Մուծված և կանխիկ									
Ընդամենը									
Մնացորդ առ									

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—1. Տեղեկագիրը լրացվում և ամիսը մեկ անգամ և ներկայացվում և վերադաս կազմակերպություն։

Անպայման նշել՝ վո՞ր բջիջն և. նրա հասցեն, ամիսն ու ամսաթիվը։

Բջիջի Բյուրոյի Նախագահ՝

Քարտուղար՝

Գանձապահ՝

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԵՆՏՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038784

[064] Juh. I
№ 3
A I/4094